

ԿԼԷՆՏԷՅԼԻ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ
ԿԸ ՀԱՆԴԻՊԻ ԿԼԷՆՏԷՅԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Մայիս 14ին, Կլենտեյլ Քաղաքի CITY CLERK, Մեծայարգ Տիար Արտաշէս Քա-
ցախեանի հրաւերով, Մայիս ամսուան ճաշ-հանդիպումը Կլենտեյլի Հոգեւոր Պետերու
Ընկերակցութեան տեղի ունեցաւ Կլենտեյլի Քաղաքապետարանի City Manager-ի Ժո-
ղովասենեակին մէջ: Զանազան Բաժանմունքներու պատասխանատուները խօսեցան
իրենց գործունէութիւններու մասին: Կլենտեյլ Քաղաքի Խորհուրդի անդամներ՝ Ճան
Տրայմէն եւ Լորըլ Ֆրիպմէն նոյնպէս ժողովի վերջաւորութեան մասնակցեցան եւ
իրենց խօսքին մէջ անդրադարձան պետական պաշտօնեաներու եւ հոգեւորականնե-
րու միջեւ գոյութիւն ունեցող համագործակցութեան:

Արեւմտեան Թեմի Հաղորդակցութեանց Բաժանմունքի Վարիչ՝ Տիար Ռէմօ
Ալեքսանտրի Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայացնելով մասնակցեցաւ ժողովին եւ
Սրբազան Հօր ողջոյնները փոխանցեց բոլորին: Սրբազան Հայրը Կլենտեյլի Հոգեւոր
Պետերու Ընկերակցութեան մօտ ներկայացուցիչ կը նշանակէ Առաջնորդանիստ Մայր
Տաճարի Կառուցման Աշխատանքներուն Վերահսկիչ Հոգ. Տ. Պարեպ Ծ. Կրդ. Երէցեանը: